

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2020Թ.-ԻՆ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Սոցիալական ապահովություն

2020 թվականը բարդ մարտահրավերների տարի էր: Տարին սկսվեց COVID 19 համավարակով, որն իր հետ բերեց բազում սոցիալական խնդիրներ:

Սոցիալական լարվածությունը մեղմելու համար, ինչպես նաև հակահամաճարակային կանոնները պահպանելու, տնից ազգաբնակչության անհարկի ելումուտը կանխելու համար 5240 ընտանիքի տրամադրվեց պարենային օգնություն:

Սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմի ողջ ընթացքում ՀՀ Վայոց ձորի մարզում հանգրվանեցին 3 300 արցախցիներ: Կազմակերպվեց նրանց բնակարանով հագուստով, պարենային, տնտեսական, հիգիենիկ անհրաժեշտ պարագաներով ըստ կարիքի ապահովելու գործընթացը:

Պատերազմից հետո աշխատանքներ տարվեցին զոհված, անհայտ կորած և վիրավոր զինծառայողների ընտանիքների սոցիալական վիճակով առկա խնդիրների գույքագրման և այն լուծելու աշխատանքներով:

01.02.2021 դրությամբ ՀՀ Պն և «Հինծառայողների ապահովագրության հիմնադրամ» է ներկայացվել 85 զոհված զինծառայողների գործեր: «Հինծառայողների ապահովագրության հիմնադրամի» կողմից դրական եզրակացություն է տրվել 43 ընտանիքի: Աշխատանքները կազմակերպվեցին այնպես, որ զոհված զինծառայողների ընտանիքները զերծ մնան փաստաթղթերի համար պետական կառուցներ դիմելուց: Գործընթացը շարունակվում է:

Աշխատանքներ է տարվում վիրավոր զինծառայողների վերաբերյալ տեղեկատվություն հավաքագրելու, հնարավորության սահմաններում աջակցելու և տարբեր ծրագրերում ընդգրկելու ուղղությամբ:

2020 թվականին նպաստ են ստացել 1829 ընտանիք: Վճարվել է 664.1մլն դրամ նպաստ: Նպաստի համակարգից դուրս մնացած սոցիալապես անապահով 1232 ընտանիքների նշանակվել է հրատապ եռամսյակային դրամական օգնություն: Վճարվել է 22.8մլն դրամ :

Շարունակվում է ավանդների դիմաց փոխհատուցման աշխատանքները՝ փոխհատուցում է տրվել 201 քաղաքացու: Վճարվել է 36,8մլն դրամ:

Մարզի զբաղվածության տարածքային կենտրոններում գրանցվել է 1062 գործազուրկ: 2020 թվականին իրականացվել է «Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովման» 7 ծրագիր 10,5 մլն դրամ արժողությամբ: Ժամանակավոր զբաղվածություն է ունեցել 38 գործազուրկ, որից 3-ը հաշմանդամություն ունեցող անձինք են:

Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսության աջակցության տրամադրման» ծրագրում ընդգրկվել է 71 հողօգտագործող:

ՀՀ Վայոց ձորի մարզում ապրում են 4322 հաշմանդամություն ունեցող անձ: Հաշմանդամություն ունեցող անձանց և տարեցների համար տնային պայմաններում ինտեգրացված առողջապահական և սոցիալական ծառայություններ են մատուցել Հայկական Կարմիր Խաչի ընկերությունը և «Տարեցների առողջության և խնամքի ապահովման ասոցացիան»: Ծրագրերի շրջանակներում տնային խնամքի ծառայություն է ստացել 110 տարեց և հաշմանդամություն ունեցող անձինք:

Մարզի երեք ՍԱՏԲ-ներում հաշվառված են 9298 կենսաթոշակառուներ, ամսական միջին կենսաթոշակի չափը կազմել է 43483 դրամ :

ՀՀ Կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 6N 1419-Ն որոշմամբ սահմանված կարգով 5 զոհված զինծառայողների ընտանիքներին տրամադրվել է բնակարանի գնման վկայագիր:

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված ծախսերից՝ սոցիալական աջակցության նպատակով 542 քաղաքացիների տրամադրվել է դրամական օգնություն ընդամենը՝ 22,6մլն դրամ:

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի

առողջապահության և սոցիալական ապահովության

վարչության պետ

Վ.Ասլանյան

23.12.2020թ.